ՕՐԻՖԼԵՅՄ ՔՈՍՄԵԹԻՔՍ ՍՊԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2016թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Երևան 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ	էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9-31

Trust Audit CJSC
Pushkin St., 43 Building, Apt. 63
0002 Yerevan
Republic of Armenia

Tel: +374(10) 516111
Fax: +374(10) 655111
Email: info@trustaudit.am
www.trustaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Օրիֆլեյմ Քոսմեթիքս» ՍՊԸ ղեկավարությանը

Մեր կողմից իրականացվել է «Օրիֆլեյմ Քոսմեթիքս» ՍՊԸ (Ընկերություն) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1931-Ն որոշմամբ հրապարակված Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները և պլանավորել և անցկացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Օրիֆլեյմ Քոսմեթիքս» ՍՊԸ ֆինանսական վիճակը, և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

«Թրաստ Աուդիտ» ՓԲԸ
տնօրեն Հայկ Մարգարյան

Աուդիտի ղեկավար
Նարեկ Մխիթարյան

29 հունիս 2017թ
Երևան

Հազար ՀՀ դրամ	Ծանոթա-գրություն	2016 31դեկտեմբեր	2015 31դեկտեմբեր
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	219,883	115,513
Ոչ նյութական ակտիվներ	5	6,796	8,550
Հետաձգված հարկային ակտիվներ	18	3,053	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		***229,732***	***124,063***
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	860,054	683,287
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	7	1,356,076	939,168
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	348,554	423,231
Այլ ընթացիկ ակտիվներ	9	1,478	78,772
Շահութահարկի գծով կանխավճար		-	11,317
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		***2,566,162***	***2,135,775***
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**2,795,894**	**2,259,838**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Սեփական կապիտալ	10		
Կանոնադրական կապիտալ		50	50
Չբաշխված շահույթ		2,400,208	1,615,513
Ընդամենը սեփական կապիտալ		***2,400,258***	***1,615,563***
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություններ	18	-	6,187
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		***-***	***6,187***
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր և կանխավճարներ	11	185,112	638,088
Շահութահարկի գծով պարտավորություն		210,524	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		***395,636***	***638,088***
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**2,795,894**	**2,259,838**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Հազար ՀՀ դրամ	Ծանոթա-գրություն	2016	2015
Շարունակվող գործունեություն			
Հասույթ	12	6,698,165	5,476,573
Վաճառքի ինքնարժեք	13	(3,345,156)	(2,925,363)
Համախառն շահույթ		**3,353,009**	**2,551,210**
Իրացման ծախսեր	14	(1,611,136)	(1,395,808)
Վարչական ծախսեր	15	(592,196)	(501,656)
Գործառնական այլ եկամուտներ		2,347	1,926
Գործառնական այլ ծախսեր	16	(64,953)	(442,469)
Գործառնական շահույթ		**1,087,071**	**213,203**
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	17	(44,775)	(14,965)
Շարունակվող գործունեությունից շահույթ մինչև հարկումը		**1,042,296**	**198,238**
Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	18	(257,601)	(70,395)
Շարունակվող գործունեությունից տարվա շահույթ		**784,695**	**127,843**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Տարվա այլ համապարփակ եկամուտ հարկերից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք հարկերից հետո		**784,695**	**127,843**

Հազար ՀՀ դրամ	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ	**50**	**1,487,670**	**1,487,720**
2015թ զուտ շահույթ	-	127,843	**127,843**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ	**50**	**1,615,513**	**1,615,563**
2016թ զուտ շահույթ	-	784,695	**784,695**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ	**50**	**2,400,208**	**2,400,258**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Հազար ՀՀ դրամ	2016	2015
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	8,027,006	6,613,282
Տրված կանխավճարի ետ ստացում	170	3,319
Հանձնարարության պայմանագրով կատարված ծախսերի փոխհատուցում	27,809	9,854
Գործառնական գործունեությունից այլ մուտքեր	7,568	2,146
Վճարումներ մատակարարներին	(6,865,223)	(4,673,951)
Վճարումներ վարձակալության գծով	(73,392)	(73,392)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(230,851)	(199,661)
Վճարումներ բյուջե	(738,679)	(1,428,498)
Վճարված շահութահարկ	(88,000)	(77,000)
Գործառնական գործունեությունից այլ ելքեր	(66,733)	(50,228)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(325)**	**125,871**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վճարումներ հիմնական միջոցների ձեռք բերման (կապիտալացման) համար	(105,552)	(3,957)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(105,552)**	**(3,957)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վճարված շահաբաժին	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոնցերի զուտ հոսքեր	**-**	**-**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ հոսք	**(105,877)**	**121,914**
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	304,057	201,285
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(37,140)	(19,142)
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**161,040**	**304,057**

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ընկերության նկարագիրը

Ընկերությունը գրանցվել է ՀՀ պետական ռեգիստրի Երևանի Արաբկիրի տարածքային բաժնում 2002թ. դեկտեմբերի 25-ին համաձայն 2002թ. նոյեմբերի 1-ի հիմնադիր ժողովի արձանագրության:
Ընկերությունն իրավաբանական անձ համարվող, շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կազմակերպություն է, որը ստեղծվել է և իր գործունեությունն իրականացնում է ՀՀ սահմանադրությանը, Քաղաքացիական օրենսգրքին, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքին, գործող այլ իրավական ակտերին և կանոնադրությանը համապատասխան:
Ընկերության ստեղծման նպատակը տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումն է: Իր առջև դրված նպատակներն իրականացնելու համար ընկերությունը զբաղվում է կոսմետիկական և այլ նյութերի մանրածախ վաճառքով:

Ընկերության գործունեության հասցեն է՝ ք. Երևան, Քաջազնունի 20
2016 թվականի ընթացքում Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 49 աշխատակից (2015 թվականի ընթացքում՝ 50 աշխատակից):

1.2. Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում և գտնվում է շարունակական բնույթ կրող քաղաքական և տնտեսական փոփոխությունների ազդեցության տակ: Հայաստանում բացակայում են ազատ շուկայական տնտեսությանը բնորոշ կատարյալ գործարար միջավայրը և համապատասխան ենթակառուցվածքները, ինչպես նաև դեռ շարունակվում են արդեն ավանդույթ դարձած հարկային օրենսդրության տարերային փոփոխությունները: Ֆինանսական հաշվետվություններն հնարավորինս արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Պատրաստման հիմունքներ

2.1. Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն, որոնք հրապարակվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

2.2. Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթները

Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որը Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրվում հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի, եթե այլ բան նշված չէ:

2.4. Անընդհատությունը

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են, ելնելով անընդհատության սկզբունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

2.5. Համադրելիությունը

Ընթացիկ ֆինանսական տարվա տվյալները համադրելի են նախորդ ժամանակաշրջանի ներկայացված տվյալների հետ: Ընթացիկ տարվա ֆինանսական հաշվետվություններում ներկայացման մոտեցման փոփոխության դեպքում նախորդ տարվա համեմատական տեղեկատվության ներկայացումը նույնպես փոփոխվում է:

2.6. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

2.7. Վերադասակարգում

Անհրաժեշտության դեպքում համադրելի թվերը ճշգրտվում են՝ ընթացիկ տարում ներկայացման փոփոխությունների հետ համադրելիությունն ապահովելու նպատակով:

2.8. Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը: Ընկերությունը չի գտնում, որ այդ փոփոխություններն էական ազդեցություն կունենան իր ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա: Ղեկավարությունը կանխատեսում է, որ նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվանից հետո առաջիկա ժամանակաշրջանում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

3.1. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարներ, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության մեթոդները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և, անհրաժեշտության դեպքում ճշգրտվում առաջընթաց:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Դասի անվանում	*Օգտակար ծառայությունը (տարի)*	*Օգտակար ծառայությունը (տոկոս)*
Շենքերի, շինությունների գծով կապիտալ ներդրումներ	20	5
Մեքենաներ և սարքավորումներ	10	10
Տրանսպորտային միջոցներ	10	10
Փոխանցող հարմարանքներ	10	10
Համակարգչային տեխնիկա	10	10
Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	10-20	10-5

3.2. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունն հետևյալն է.

Դասի անվանում	*Օգտակար ծառայությունը (տարի)*	*Օգտակար ծառայությունը տարեկան (տոկոս)*
Համակարգչային ծրագրեր	1-10	100-10
Լիցենզիաներ	իրավաբանորեն ամրագրված իրավունքի ժամկետում	

3.3. Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռք բերման ծախսումները, արտադրանքի վերամշակման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Ձեռք բերման ծախսումներն են գնման գինը, ներմուծման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Ընկերությանը ետ վերադարձման, մաքսային բրոքեր (միջնորդ) հանդիսացող անձանց վճարվող գումարները, ինչպես նաև այդ պաշարների ձեռք բերման հետ կապված տրանսպորտային, բեռնման, բեռնաթափման և այլ ծախսումները:

Ձեռք բերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները հանվում են:

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշման ճանապարհով:

Փոխադարձ փոխարինելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է ԱՄԱԵ (ՖԻՖՈ) արժեքի բանաձևով:

3.4. Վարձակալված ակտիվներ

Վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ, երբ վարձատուն է կրում վարձակալված ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված բոլոր ռիսկերը և օգուտները: Գործառնական վարձակալության գծով վճարները գծային հիմունքով ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Վարձակալված ակտիվների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսումները ճանաչվում են որպես ակտիվ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հիմնական միջոցներ» դասում: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության, ծախսագրվում են իրականացման պահին:

3.5. Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասները պետք է ճանաչվեն ֆինանսական արդյունքներում, թե ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեզրկման գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «ֆինանսական ծախս» և «ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

I. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշվող չեն ակտիվ շուկայում: Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Այնուհետև, դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով: Կարճաժամկետ դեբիտորական պարտքերի հետ կապված դրամական միջոցների հոսքերը չեն զեղչվում, եթե զեղչման ազդեցությունը էական չէ:

Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

II. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից և բանկերում հաշիվներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակամիջոցում և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցներ, բանկային հաշիվների մնացորդներ և դրամական միջոցներ ճանապարհին:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

I. Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս:

II. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Որպես առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր են դասակարգվում մարման ենթակա այն գումարները, որոնք ստեղծվում են Ընկերության կողմից ուղղակիորեն պարտատիրոջից (կրեդիտորից) ապրանքներ կամ ծառայություններ գնելու միջոցով:

Կրեդիտորական պարտքը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործարքի պայմանագրային կողմ, այսինքն՝ երբ առաջանում է պահանջի իրավունքը:

Սկզբնական ճանաչման պահին կրեդիտորական պարտքը չափվում է սկզբնական հաշվում նշված գումարով:

Կրեդիտորական պարտքը դուրս է գրվում այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրով սահմանված պարտականությունը կատարվել է, չեղյալ է համարվել կամ լրացել է դրա ուժի մեջ լինելու ժամկետը:

3.6. Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Արտարժույթ	*31.12.2016թ*	*31.12.2015թ*
1 Եվրո	512.2 դրամ	528.69 դրամ
1 ԱՄՆ դոլար	483.94 դրամ	483.75 դրամ

3.7. Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Ընկերության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով: Շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

3.8. Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ

ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքերի պահուստի միջոցով:

3.9. Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության ուժի մեջ են եղել

հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց և երբ վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Ընկերությունը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.10. Աշխատակիցների հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվառման ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, Ընկերությունը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի. և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ ստանդարտներով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, ՀՀՍՍ 2 «Պաշարներ» և ՀՀՍՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտները):

Ընկերությունը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ. և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

3.11. Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

Հասույթից նվազեցվում են հաճախորդների կողմից վերադարձվելիք ապրանքների գնահատված գումարը, գնահատված իջեցումները և նմանատիպ այլ նվազեցումներ:

Ծառայությունների մատուցում

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, հասույթը ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք կփոխհատուցվեն:

Ապրանքների վաճառք

Ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ բավարարված են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) Ընկերությունը գնորդին է փոխանցում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը.

բ) Ընկերությունը չի պահպանում ո՛չ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, և ո՛չ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկում.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն.

ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

4. Հիմնական միջոցներ

Սկզբնական արժեք						
	Վարձակալված շենքի գծով ներդրումներ	Փոխանցող հարմարանքներ	Մեքենաներ և սարքավորումներ, համակարգչային տեխնիկա	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական տնտեսական և այլ գույք	Ընդամենը
Մնացորդը առ 31.12.2014թ	**42,488**	**10,431**	**109,900**	**21,253**	**70,002**	**254,074**
Ավելացում	-	-	3,168	-	129	**3,297**
Դուրսգրում	-	-	-	-	-	**-**
Մնացորդը առ 31.12.2015թ	**42,488**	**10,431**	**113,068**	**21,253**	**70,131**	**257,371**
Ավելացում	94,533	-	6,462	-	40,362	**141,357**
Դուրսգրում	(24,638)	-	(4,873)	-	(4,345)	**(33,856)**
Մնացորդը առ 31.12.2016թ	**112,383**	**10,431**	**114,657**	**21,253**	**106,148**	**364,872**
Մաշվածություն						
Մնացորդը առ 31.12.2014թ	**15,077**	**8,431**	**55,140**	**6,990**	**34,403**	**120,041**
Տարվա ծախս	2,124	1,043	10,923	2,125	5,602	**21,817**
Դուրսգրում	-	-	-	-	-	**-**
Մնացորդը առ 31.12.2015թ	**17,201**	**9,474**	**66,063**	**9,115**	**40,005**	**141,858**
Տարվա ծախս	2,538	956	11,267	2,125	6,982	**23,868**
Դուրսգրում	(11,806)	-	(4,750)	-	(4,181)	**(20,737)**
Մնացորդը առ 31.12.2016թ	**7,933**	**10,430**	**72,580**	**11,240**	**42,806**	**144,989**
Զուտ հաշվեկշռային արժեք						
Մնացորդը առ 31.12.2015թ	**25,287**	**957**	**47,005**	**12,138**	**30,126**	**115,513**
Մնացորդը առ 31.12.2016թ	**104,450**	**1**	**42,077**	**10,013**	**63,342**	**219,883**

Գրավադրված գույք

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

Մաշվածության գծով ծախս

Հիմնական միջոցների մաշվածության գծով ծախսը բաշխվել է իրացման և վարչական ծախսերում (ծանոթագրություններ 14 և 15):

Այլ

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը՝ վաճառքի համար պահվող, ժամանակավորապես շահագործումից հանված կամ զրո հաշվեկշռային արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ չունի:

5. Ոչ նյութական ակտիվներ

Սկզբնական արժեք			
	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ, վստահագրեր	Ընդամենը
Մնացորդը առ 31.12.2014թ	**14,864**	**9,472**	**24,336**
Ավելացում	-	-	**-**
Մնացորդը առ 31.12.2015թ	**14,864**	**9,472**	**24,336**
Ավելացում	-	-	**-**
Մնացորդը առ 31.12.2016թ	**14,864**	**9,472**	**24,336**
Մաշվածություն			
Մնացորդը առ 31.12.2014թ	**7,171**	**6,738**	**13,909**
Տարվա ծախս	1,410	467	**1,877**
Մնացորդը առ 31.12.2015թ	**8,581**	**7,205**	**15,786**
Տարվա ծախս	1,410	344	**1,754**
Մնացորդը առ 31.12.2016թ	**9,991**	**7,549**	**17,540**
Զուտ հաշվեկշռային արժեք			
Մնացորդը առ 31.12.2015թ	**6,283**	**2,267**	**8,550**
Մնացորդը առ 31.12.2016թ	**4,873**	**1,923**	**6,796**

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի գծով ծախսը ներառվել է իրացման ծախսերում (ծանոթագրություն 14):

6. Պաշարներ

	2016թ	2015թ
Ապրանքներ պահեստում	916,448	687,574
Տարա և տարանյութ	3,279	17,115
Ապրանքների արժեքի մինչև իրացման զուտ արժեք նվազեցում	(59,673)	(21,402)
Ընդամենը պաշարներ	**860,054**	**683,287**

Շարունակվող գործունեության գծով 2016 թվականի ընթացքում որպես ծախս ճանաչված պաշարների ինքնարժեքը 3,409,443 հազար դրամ է (2015 թվականի ընթացքում՝ 2,975,027 հազար դրամ):
Որպես ծախս ճանաչված պաշարների ինքնարժեքը իր մեջ ներառում է նաև պաշարների արժեքի մինչև իրացման զուտ արժեք նվազեցումները:

Ակնկալվում է, որ ներկայացված պաշարները ամբողջությամբ կփոխհատուցվեն տասներկու ամսվա ընթացքում: Պաշարները գրավադրված չեն:

7. Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ

	2016թ	2015թ
Առևտրային դեբիտորական պարտքեր	159,031	173,535
Կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստ	-	-
Զուտ առևտրային դեբիտորական պարտքեր	159,031	173,535
Տրված կանխավճարներ	1,037,843	648,117
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	21,439	10,286
Կանխավճարներ մաքսային մարմիններին	104,097	54,656
Այլ դեբիտորական պարտքեր	33,666	52,574
Ընդամենը դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	**1,356,076**	**939,168**

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում: Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվեգրվում և սովորաբար մարվում են 30 օրվա ընթացքում: Ընկերությունը լրիվ պահուստավորում է բոլոր այն առևտրային դեբիտորական պարտքերը, որոնց մարման ժամկետից անցել է ավելի քան 365 օր, քանի որ, հիմնվելով անցյալի փորձի վրա, մարման ժամկետը 365 օրը գերազանցելու դեպքում առևտրային դեբիտորական պարտքերը համարվում են անհավաքագրելի:

Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեի գծով դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Ընկերության առևտրային դեբիտորական պարտքերի ենթարկվածությունը պարտքային և արժութային ռիսկերին ներկայացված են ծանոթագրություն 19-ում:

2016թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամկետանց դեբիտորական պարտքեր չկան:

8. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները դրամարկղում ու բանկերում: Ինչպես ներկայացված է դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում, մնացորդները դրամարկղում և բանկերում ֆինանսական տարվա վերջում կարող են համադրվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության հոդվածների հետ հետևյալ կերպ.

	2016թ	2015թ
Դրամարկղ	-	-
Ընթացիկ հաշիվներ բանկում	161,040	304,057
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	161,040	304,057
Դրամական միջոցներ ճանապարհին	187,514	119,174
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**348,554**	**423,231**

Ճանապարհին գտնվող դրամական միջոցները իրենցից ներկայացնում են հաշվետու ամսաթվի դրությամբ ինկասատորներին հանձնած և «Թել Սել» ՓԲԸ կողմից հավաքագրված, սակայն Ընկերության բանկային հաշվին դեռևս մուտք չեղած գումարները:

Ընկերության դրամական միջոցների և դրանց համարժեքների ենթարկվածությունը արժութային և պարտքային ռիսկերին ներկայացված են ծանոթագրություն 19-ում:

9. Այլ ընթացիկ ակտիվներ

	2016թ	2015թ
Հետաձգված ԱԱՀ	1,124	78,734
Առհաշիվ տրված գումարներ	354	38
Ընդամենը այլ ընթացիկ ակտիվներ	**1,478**	**78,772**

10. Սեփական կապիտալ

10.1 Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 50 հազար ՀՀ դրամ, որը կազմված է 1 (մեկ) բաժնեմասից, որի անվանական արժեքը կազմում է 50 հազար ՀՀ դրամ: Ընկերության մեկ բաժնեմասը լրիվ վճարված է և ամբողջությամբ տեղաբաշխված:
Հաշվետու տարում կանոնադրական կապիտալի փոփոխություն տեղի չի ունեցել:

10.2 Կուտակված շահույթ և շահաբաժին

Ընկերությունը շահույթի բաշխումն իրականացնում է մասնակցի կողմից այդ մասին որոշման հիման վրա: 2016 և 2015 թվականների ընթացքում շահաբաժին չի հայտարարվել և չի վճարվել:

11. Կրեդիտորական պարտքեր և կանխավճարներ

	2016թ	2015թ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	118,358	508,647
Ստացված կանխավճարներ	4,365	1,196
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	36,602	106,016
Պարտավորություններ աշխատակիցներին չօգտագործված արձակուրդայինների գծով	25,787	22,229
Ընդամենը կրեդիտորական պարտքեր և կանխավճարներ	**185,112**	**638,088**

Առևտրային կրեդիտորական պարտքերը տոկոսային չեն և որպես կանոն մարվում են 30 օրվա ընթացքում:
Ընկերության առևտրային կրեդիտորական պարտքերի ենթարկվածությունը արժութային և իրացվելիության ռիսկերին ներկայացված են ծանոթագրություն 19-ում:

12. Հասույթ

	2016թ	2015թ
Ապրանքների իրացումից	6,691,279	5,476,218
Ծառայությունների մատուցումից	6,886	355
Ընդամենը հասույթ	**6,698,165**	**5,476,573**

13. Վաճառքի ինքնարժեք

	2016թ	2015թ
Վաճառված ապրանքների ինքնարժեք	(3,345,156)	(2,925,363)
Ընդամենը վաճառքի ինքնարժեք	**(3,345,156)**	**(2,925,363)**

14. Իրացման ծախսեր

	2016թ	2015թ
Կոմիսիոն վճարներ	(1,328,707)	(1,116,021)
Անձնակազմի վարձատրություն	(58,590)	(52,365)
Հիմնական միջոցների մաշվածություն	(19,095)	(17,454)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(1,754)	(1,877)
Պահեստային տարածքի վարձավճար	(37,700)	(37,700)
Փաթեթավորման ծախսեր	(20,605)	(19,305)
Տրանսպորտային և ապահովագրական ծախսեր	(19,135)	(21,458)
Գովազդային ծախսեր	(22,868)	(22,456)
Մարքեթինգային ծախսեր	(91,471)	(88,873)
Հայերեն մակնշման ծախսեր	(11,211)	(18,299)
Ընդամենը իրացման ծախսեր	**(1,611,136)**	**(1,395,808)**

15. Վարչական ծախսեր

	2016թ	2015թ
Անձնակազմի վարձատրություն	(183,743)	(149,675)
Հիմնական միջոցների մաշվածություն	(4,773)	(4,363)
Հիմնական միջոցների գծով ընթացիկ ծախսեր	(7,438)	(5,113)
Գրասենյակային տարածքի վարձավճար	(23,460)	(23,460)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	(18,431)	(17,699)
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	(52,676)	(34,348)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	(8,501)	(11,547)
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	(9,252)	(16,773)
Բանկային ծախսեր	(98,284)	(102,446)
Չփոխհատուցվող հարկեր	(175,562)	(124,331)
Այլ ծախսեր	(10,076)	(11,901)
Ընդամենը վարչական ծախսեր	**(592,196)**	**(501,656)**

16. Գործառնական այլ ծախսեր

	2016թ	2015թ
Ռոյալթիների գծով	(1,950)	(385,925)
Ժամկետանց և խոտան ապրանքների արժեզրկում	(38,271)	(16,597)
Արտարժույթի փոխարկումից	(19,131)	(19,936)
Տուգանքներ և տույժեր	-	(4,394)
Այլ ծախսեր	(5,601)	(15,617)
Ընդամենը գործառնական այլ ծախսեր	**(64,953)**	**(442,469)**

17. Այլ ոչ գործառնական շահույթ

	2016թ	2015թ
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ վնաս	(33,623)	(17,003)
Հիմնական միջոցների դուրսգրումից ծախս	(13,119)	-
Բանկային մնացորդի վրա հաշվեգրված տոկոսներ	1,967	2,038
Ընդամենը այլ ոչ գործառնական շահույթ	**(44,775)**	**(14,965)**

18. Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում

	2016թ	2015թ
Ընթացիկ հարկ	(266,841)	(76,614)
Հետաձգված հարկ	9,240	6,219
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**(257,601)**	**(70,395)**

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2015թ. 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ միջև եղած տարբերությունը հիմնական միջոցների, պաշարների և կուտակված արձակուրդայինների պահուստի գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազաների միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապվածությունը.

	2016	Արդյունավետ դրույքաչափ (%)	2015	Արդյունավետ դրույքաչափ(%)
Շահույթ մինչև հարկումը	**1,042,296**	**100**	**198,238**	**100**
Շահութահարկ 20% դրույքաչափով	208,460	20	39,648	20
Չնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտներ)	49,141	5	30,747	16
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**257,601**	**25**	**70,395**	**36**

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ

	2016	Շահույթում կամ վնասում ճանաչված	2015
Հետաձգված հարկային ակտիվ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	5,158	712	4,446
Պաշարներ	11,934	7,654	4,280
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	**17,092**	**8,366**	**8,726**
Հետաձգված հարկային պարտավորություն			
Հիմնական միջոցներ	(14,039)	874	(14,913)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	**(14,039)**	**874**	**(14,913)**
Զուտ հետաձգված հարկային ակտիվ(պարտավորություն)	**3,053**	**9,240**	**(6,187)**

	2015	Շահույթում կամ վնասում ճանաչված	2014
Հետաձգված հարկային ակտիվ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,446	421	4,025
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	4,280	4,280	**4,025**
Հետաձգված հարկային պարտավորություն	**8,726**	**4,701**	
Հիմնական միջոցներ			(16,431)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(14,913)	1,518	**(16,431)**
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	**(14,913)**	**1,518**	**(12,406)**

19. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ընկերության հիմնական ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերությունն ունի առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, դրամական միջոցներ, որոնք առաջանում են Ընկերության գործառնական գործունեության ընթացքում:
Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունն ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

◊ շուկայական ռիսկ

◊ պարտքային ռիսկ

◊ իրացվելիության ռիսկ

Ընկերության ղեկավարությունը վերահսկում է այդ ռիսկերի կառավարման գործընթացը: Ընկերությունը վերահսկող մարմին չի ստեղծել, որը պատասխանատու կլիներ ռիսկերի կառավարման համար, սակայն գոյություն ունի ռիսկերի կառավարման որոշակի քաղաքականություն, որը նպատակ ունի ապահովել Ընկերության գործունեության անընդհատությունը և դրա արդյունավետությունը: Ղեկավարությունը հավաստիացած է, որ Ընկերության ֆինանսական ռիսկերի հետ կապված գործունեությունն իրականացվում է համապատասխան քաղաքականության և ընթացակարգերի համաձայն, իսկ ֆինանսական ռիսկերի սահմանումը և գնահատումը և դրանց կառավարումն իրականացնում է Ընկերության վրա ռիսկ ընդունելու պատրաստակամության համաձայն: Քաղաքականության համաձայն Ընկերությունը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ:

19.1 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքների տատանումների ռիսկն է շուկայական գների փոփոխության հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժութային ռիսկը: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արժութային ռիսկ

Արժութային ռիսկը արտարժույթի փոխարժեքային փոփոխության հետևանքով ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է: Արժութային ռիսկի նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված ձեռքբերումների: Այդ գործարքները հիմնականում արտահայտվում են Եվրոյով և ԱՄՆ դոլարով: Ստացված եկամուտն գրեթե ամբողջությամբ արտահայտված է Ընկերության ֆունկցիոնալ արժույթով (ՀՀ դրամով):

Ենթարկվածությունն արժութային ռիսկին

Ստորև ներկայացված է արժութային ռիսկին Ընկերության ենթարկվածությունն՝ ըստ անվանական գումարների.

	արտահայտված ԱՄՆ դոլարով		արտահայտված Եվրոյով	
	2016թ	2015թ	2016թ	2015թ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,125	2,462	63,670	157,191
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ		-	1,037,597	647,072
Կրեդիտորական պարտքեր և կանխավճարներ		-	(43,519)	(412,916)
Զուտ ենթարկվածություն	**2,125**	**2,462**	**1,057,748**	**391,347**

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

ՀՀ դրամ	Միջին տարեկան դրույք		Դրույքը հաշվետու ամսաթվի դրությամբ	
	2016թ	2015թ	2016թ	2015թ
1 ԱՄՆ դոլար	480.5	477.85	483.94	483.75
1 Եվրո	531.88	530.78	512.2	528.69

Զգայունության վերլուծություն

Ստորև ներկայացվում է, դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեվորումը (արժեզրկումը) Եվրոյի և ԱՄՆ դոլարի նկատմամբ ինչ չափով կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը: Վերլուծությունը հիմնված է ղեկավարության կողմից որպես խելամտորեն հնարավոր դիտարկվող արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Այս վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները կմնան անփոփոխ: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2015թ.՝ 10%-ով):

Հազար ՀՀ դրամ	Արժեվորում		Արժեզրկում	
	Սեփական կապիտալ	Շահույթ կամ վնաս	Սեփական կապիտալ	Շահույթ կամ վնաս
31 դեկտեմբերի 2016թ.				
10% տատանում ԱՄՆ դոլարի նկատմամբ	(213)	(213)	213	213
10% տատանում Եվրոյի նկատմամբ	(105,775)	(105,775)	105,775	105,775
31 դեկտեմբերի 2015թ.	(246)	(246)	246	246
10% տատանում ԱՄՆ դոլարի նկատմամբ				
10% տատանում Եվրոյի նկատմամբ	(39,135)	(39,135)	39,135	39,135

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտարժույթով արտահայտված գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

19.2 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն իրենից ներկայացնում է ֆինանսական վնաս կրելու ռիսկ, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել Ընկերության նկատմամբ ստանձնած իր պայմանագրային պարտականությունները: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում առևտրային դեբիտորական պարտքերի, բանկերում առկա և ճանապարհին գտնվող դրամական միջոցների մնացորդների գծով:

Ենթարկվածությունը պարտքային ռիսկին

	Հաշվեկշռային արժեք	
	2016թ	2015թ
Առևտրային դեբիտորական պարտքեր	159,031	173,535
Ընթացիկ հաշիվներ բանկերում	161,040	304,057
Դրամական միջոցներ ճանապարհին	187,514	119,174
	507,585	**596,766**

Առևտրային դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկը Ընկերության կողմից վերահսկվում է կանոնավոր կերպով, յուրաքանչյուր գնորդի հետ սերտ համագործակցության միջոցով:
Առևտրային դեբիտորական պարտքերը գրավով ապահովված չեն:
Ստորև ներկայացվում է առևտրային դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն՝ ըստ աշխարհագրական տարածաշրջանների.

	Հաշվեկշռային արժեք	
	2016թ	2015թ
Հայաստանյան	159,031	173,535
Օտարերկրյա	-	-
	159,031	**173,535**

Ստորև ներկայացվում է առևտրային դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն՝ ըստ հաճախորդների տեսակների.

	Հաշվեկշռային արժեք	
	2016թ	2015թ
Իրավաբանական անձինք	-	-
Ֆիզիկական անձինք	159,031	173,535
	159,031	**173,535**

Հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի գծով նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2016թ. դեկտեմբերի 31-ին Ընկերությունն ունի 348,554 հազար դրամ գումարով դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (2015թ.՝ 423,231 հազար դրամ), որն իրենից ներկայացնում է առավել ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների հետ կապված: Դրամական միջոցները պահվում են խոշոր հայկական բանկում, և Ընկերությունն այդ բանկի կողմից պարտականությունների չկատարում չի ակնկալում:

19.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն իրենից ներկայացնում է Ընկերության կողմից ֆինանսական պարտավորությունների կատարման հետ կապված դժվարություններ, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Համաձայն Ընկերության իրացվելիության կառավարման քաղաքականության՝ ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու նպատակով բանկային հաշիվներում և դրամարկղում պահվում են բավարար միջոցներ, ինչպես նաև, բարձր իրացվելի այլ ակտիվներ՝ ինչը հնարավորություն կտա խուսափել Ընկերության համար անընդունելի կորուստներ կրելուց և Ընկերության բարի համբավը վտանգելուց:

Ստորև ներկայացվում է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները՝ առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության: Ընկերության ղեկավարությունն ակնկալում է, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը չեն կարող տեղի ունենալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ շատ ավելի տարբեր գումարներով:

Հազար ՀՀ դրամ				2016թ.
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական հոսքեր	0-6 ամիս	6-12 ամիս
Առևտրային և այլ կրեդիտորական պարտավորություններ				
Առևտրային կրեդիտորական պարտքեր	118,358	118,358	118,358	-
Կրեդիտորական այլ պարտավորություններ	66,754	66,754	66,754	-
	185,112	**185,112**	**185,112**	**-**

Հազար ՀՀ դրամ				2015թ.
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական հոսքեր	0-6 ամիս	6-12 ամիս
Առևտրային և այլ կրեդիտորական պարտավորություններ				
Առևտրային կրեդիտորական պարտքեր	508,647	508,647	508,647	-
Կրեդիտորական այլ պարտավորություններ	129,441	129,441	129,441	-
	638,088	**638,088**	**638,088**	**-**

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամական հոսքերը, մասնավորապես դրամական միջոցները և դրանց համարժեքները, ինչպես նաև առևտրային դեբիտորական պարտքերը:

19.4 Իրական արժեք

Ղեկավարության կարծիքով Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես հավասար է դրանց հաշվեկշռային արժեքներին:

19.5 Կապիտալի կառավարում

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն այնպես, որպեսզի ապահովի Ընկերության կարողությունը շարունակել իր գործունեությունը տեսանելի ապագայում՝ միաժամանակ առավելագույնին հասցնելով շահառուների հատույցը՝ օպտիմալացնելով պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցությունը: Ընկերությունը չունի կապիտալի կառավարումը կարգավորող մշակված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝ Ընկերության գործառնական և երկարաժամկետ պահանջները բավարարելու, ինչպես նաև շուկայի մասնակիցների վստահությունը պապանելու համար: Դա իրագործվում է դրամական միջոցների արդյունավետ կառավարման, Ընկերության հասույթի և շահույթի շարունակական վերահսկման միջոցով:

Ընկերության պարտքային և սեփական կապիտալի հարաբերակցությունը հետևյալն է.

	2016թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդամենը պարտավորություններ	395,636	644,275
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(348,554)	(423,231)
Զուտ պարտք	**47,082**	**221,044**
Ընդամենը սեփական կապիտալ	**2,400,258**	**1,615,563**
Պարտքային և սեփական կապիտալի հարաբերակցությունը	**0,02**	**0,14**

2016 և 2015թթ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների ընթացքում կապիտալի կառավարման նպատակներում, քաղաքականությունում կամ ընթացակարգերում փոփոխություններ չեն կատարվել:
Ընկերությունը ենթակա չէ կապիտալի նկատմամբ արտաքին որևէ պահանջի:

20. Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ

ա) Վերահսկողություն

Ընկերության բաժնեմասերի 100 տոկոսը պատկանում է Օրիֆլեյմ Հոլդինգս Բի. Վի. ընկերությանը (Հասցե՝ Բոլդուկ գեբուվ Ա, Յութոպիալաան 52, 5232 ՍԵ Հերթօգոնբոշ, Նիդերլանդներ), որը նաև հանդիսանում է վերջնական վերահսկող կողմը և չի պատրաստում հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ:

Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են նաև համատեղ վերահսկողության տակ գտնվող կազմակերպությունները, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մանրամասները հետևյալն են.

բ) Համատեղ վերահսկողության տակ գտնվող կազմակերպությունների հետ, կատարված գործարքների մանրամասներ.

Անվանումը	Մնացորդ առ 31.12.2016	2016թ.	Մնացորդ առ 31.12.2015
Ապրանքների ձեռքբերում	797	3,315,892	37,021
Ապրանքների վաճառք	-	15,570	-
Ստացված ծառայություններ	43,519	144,322	375,896
Տրված կանխավճարներ	1,037,597	-	647,072

Անվանումը	Մնացորդ առ 31.12.2015	2015թ.	Մնացորդ առ 31.12.2014
Ապրանքների ձեռքբերում	37,021	2,499,849	-
Ապրանքների վաճառք	-	10,149	-
Ստացված ծառայություններ	375,896	540,375	136,953
Տրված կանխավճարներ	647,072	-	166,273

գ) Գործարքներ վերադաս ղեկավարության հետ

Ստորև ներկայացված է վարչական ծախսերում ներառված վերադաս ղեկավարության հետ գործարքների մանրամասները.

Անվանումը	Մնացորդ առ 31.12.2016	2016թ.	Մնացորդ առ 31.12.2015	2015թ.	Մնացորդ առ 31.12.2014
Վերադաս ղեկավարության աշխատավարձի վճարմանն ուղղված միջոցներ	-	33,698	-	28,138	-

դ) Գնային քաղաքականություն

Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքները միշտ չէ, որ տեղի են ունեցել շուկայական պայմաններով:

21. Գործառնական վարձակալություն

Ընկերությունը գրասենյակային և պահեստային տարածքներ է վարձակալել գործառնական վարձակալության պայմաններով: Համաձայն պայմանագրերի, վարձակալության ժամկետները կազմում են համապատասխանաբար հինգ տարի և տաս տարի՝ այդ ժամկետներից հետո վարձակալության պայմանագրերը նորացնելու հնարավորությամբ: Վարձակալության

պայմանագրերը չեղյալ չհայտարարվող են նշված ժամկետներում, սկսած 2010թ. մարտի 1-ից (2015թ. մարտի 1-ից ևս հինգ տարով նորացված) և 2012թ. հուլիսի 1-ից: Ընկերությունը վարձակալության ժամանակաշրջանի վերջում հնարավորություն չունի ձեռք բերել վարձակալված տարածքները:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք վարձավճարները ներկայացված են ստորև.

	2016թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մեկ տարվա ընթացքում	73,392	73,392
Մեկից հինգ տարվա ընթացքում	241,956	270,108
Հինգ տարուց հետո	22,620	67,860
	337,968	**411,360**

22. Պայմանական դեպքեր

Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել խիստ տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել սույն ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության ապահովագրական ոլորտը դեռևս գտնվում է զարգացման փուլում, և զարգացած տնտեսություն ունեցող երկրներում լայնորեն տարածված ապահովագրության շատ տեսակներ դեռևս մատչելի չեն Հայաստանի Հանրապետությունում: Ընկերությունը ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ինչպես նաև երրորդ անձանց նկատմանբ պարտավորությունների գծով, որոնք կարող են առաջանալ Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարներից կամ նրա գործունեության ընթացքում: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Շրջակա միջավայրի պահպանություն

Ընկերության ղեկավարության համոզմամբ շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող բոլոր պահանջները պահպանվում են Ընկերության գործունեության ընթացքում, ինչի պատճառով վստահ է, որ չունի որևէ էական պարտավորություն շրջակա միջավայրի պահպանության հետ կապված: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի պահպանությունը կարգավորող օրենսդրությունը նույնպես գտնվում է զարգացման փուլում, և օրենսդրության ու դրա մեկնաբանությունների փոփոխությունները հետագայում էական պարտավորությունների առաջացման հիմք կարող են հանդիսանալ:

Դատական վեճեր

Հաշվետու ամսաթվի դրությամբ, Ընկերության ղեկավարությունը տեղյակ չէ Ընկերության դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող նշանակալի դատական հայցի մասին:

23. Ֆինանսական հաշվետվությունների հաստատում

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հրապարակման համար 29 հունիս 2017թ.:

Նարիա Մարգարյան
տնօրեն

Հայկանուշ Մանուկյան
գլխավոր հաշվապահ